

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Պատմության ինստիտուտի կառուցվածքում 2016 թ. Ընդհանուր պատմության բաժնի ստեղծումը կարևոր և շրջադարձային իրադարձություն էր ինստիտուտի երկարամյա պատմության մեջ: Նման բաժնի կազմավորման անհրաժեշտությունը պայմանավորված էր վերջին տարիներին ինստիտուտի արտաքին գիտագործնական կապերի և համագործակցության կայուն զարգացմամբ, գիտաշխատողների կողմից համաշխարհային պատմության, դրանում Հայաստանի և հայության մասնակցության ու դերի ուսումնասիրումը խորացնելու անհրաժեշտությամբ: Բաժնի ստեղծման հրատապ անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև նրանով, որպեսզի հնարավորություն տրվի դեռևս 2005 թվականից ինստիտուտում գործող ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Պատմություն», իսկ 2009 թ.՝ «Միջազգային հարաբերություններ» մասնագիտություններով մագիստրատուրայի շրջանավարտներին շարունակելու իրենց ուսումը ինստիտուտի ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում՝ Է.00.02՝ «Համաշխարհային պատմություն և միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ: Վերջինս որոշիչ խթան հանդիսացավ ինստիտուտում համաշխարհային պատմության և միջազգային հարաբերությունների երիտասարդ մասնագետներ պատրաստելու համար, ինչը անկախ պետականության պայմաններում ունի բացառիկ նշանակություն:

Ընդհանուր պատմության բաժինը հիմնվել է ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանի 2016 թ. մարտի 1-ի N 24 հրամանով՝ ի կատարումն ինստիտուտի տնօրինության 2016 թ. հունվարի 22-ի և Գիտական խորհրդի մարտի 1-ի որոշումների: Նույն հրամանով հաստատվեց նորաստեղծ բաժնի կադրային կազմը, բաժնի վարիչի պարտականությունները դրվեցին ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Խաչատրյանի վրա:

Նորաստեղծ բաժնի առաջին նիստը տեղի է ունեցել 2016 թ. մարտի 11-ին, որի ընթացքում Ա. Մելքոնյանը կարևորել է բաժնի ստեղծումը, աշխատակիցներին մաղթել գիտական հաջողություններ, նշել, որ նրանց առջև դրված է անչափ պատասխանատու խնդիր՝ նպաստել բաժնի կայացմանն ու զարգացմանը: Աշխատակիցները գոհունակությամբ ընդունեցին նորաստեղծ բաժնում իրենց ընդգրկելը և պատրաստակամություն հայտնեցին գիտական ողջ ներուժը ներդնել բաժնի կայացման համար:

Բաժնի աշխատանքներին ճիշտ ընթացք տալու համար մշակվեց համապատասխան ռազմավարություն, կարևորվեց մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին, համագործակցության շրջանակների ընդլայնումը, նաև օտար լեզուներով ուսումնասիրությունների հրատարակումը և այլն: Խնդիր դրվեց նախաձեռնել և զարգացնել ուսումնասիրությունները համաշխարհային պատմագրության, օտար երկրների և ժողովուրդների հետ Հայաստանի և հայության փոխհարաբերությունների պատմության հետազոտման ուղղությամբ: Կարևորվեց պատմական առնչությունների վերհանումը, տարբեր երկրներում հայ ժողովրդի հարուստ

պատմամշակութային ժառանգության արձանագրումն ու առավել հիշարժան իրադարձությունների հանրայնացումը:

Ընդհանուր պատմության բաժինը կարևոր մասնակցություն ապահովեց Պատմության ինստիտուտի և օտարերկրյա (Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Վրաստան, Լիտվա, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Հունաստան, Եգիպտոս և այլն) պատմագիտական հաստատությունների միջև ինչպես ստորագրված, այնպես էլ նախատեսվող համագործակցության համաձայնագրերի իրականացման գործում: Համաձայնագրերով ամրագրվել են այն երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հեռանկարային թեմաները, որոնցից մի քանիսի շուրջ արդեն իսկ ծավալվել են համատեղ աշխատանքներ: Նման համագործակցության արդյունավետ իրագործումը՝ հստակ գիտական թեմաների ուղղությամբ որակյալ պատմագիտական արդյունք ստեղծելու միջոցով, մեծապես կնպաստի երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու գիտական լուրջ հիմքերի վրա դնելով, կամրապնդի պատմական բարեկամությունը հայ և այլ ժողովուրդների միջև:

Բաժնի ստեղծման առաջին իսկ տարիներին աշխատակիցների կողմից արձանագրվեցին կարևոր հաջողություններ. 2016–2017 թթ. հրատարակվեցին մի քանի մենագրություններ, տասնյակ գիտական հոդվածներ, այդ թվում արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում: Բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Հովհաննես Ալեքսանյանը հրատարակեց «Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941–1991 թթ.» արժեքավոր մենագրությունը, որում ներկայացվում է խորհրդային հանրապետություններում հայության կրթամշակութային կյանքը, նաև կապերը տեղի ժողովուրդների հետ, ներդրումը միութենական հանրապետությունների հասարակական-քաղաքական կյանքում և այլն: Գիտաշխատող, պ.գ.թ. Արամ Սայիյանի «Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիռում» արժեքավոր աշխատությունը նվիրված է Թուրքիայի Հանրապետությունում բռնկված քրդական ապստամբություններից ամենահզորի՝ Արարատի ապստամբության պատմության համակողմանի ուսումնասիրությանը: Գրքում բազում նոր փաստեր ու վկայություններ են բերվում քրդական շարժման և նրանում լուրջ դերակատարություն ունեցած գործիչների մասին: Բացահայտելով ապստամբության պարտության պատճառները՝ ցույց է տրվում ԽՍՀՄ-ի միջամտության վճռական դերը քուրդ ապստամբների հանդեպ քեմալականների ձեռք բերած հաղթանակի մեջ: Համակողմանիորեն լուսաբանվում են Իրանի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և այլ պետությունների՝ քրդական հարցում որդեգրած քաղաքականության առանձնահատկությունները և այլն:

Արտասահմանյան և հանրապետական հեղինակավոր պարբերականներում լույս տեսան առաջատար գիտաշխատողներ, պ.գ.դ., պրոֆեսորներ Կ. Խաչատրյանի՝ «Армения в системе военно-промышленного комплекса СССР», Новая и новейшая история, Москва, 2017, N 6, с. 67–78, և Երվանդ Մարգարյանի՝ «На стыке древних мир-систем: пролегомены», Диалог со временем: Альманах интеллектуальной истории, Москва, 2017, N 59, с. 18-43, «A Note of the

Ancient World-Systems», Iran and Caucasus: Research Papers from the Caucasian Centre for Iranian Studies. Leiden - London - Yerevan, 2018. Volume 22.2. P. 160-168, «The Euphrates frontier in the Byzantine period. Undergoing the new reality», At the joint of the world systems: from the history of contact zones of antiquity and modernity. Oxford: Archaeopress, 2018, ավագ գիտաշխատողներ, պ.գ.թ. Արմենուհի Ղամբարյանի «Армения во внешней политике США в конце 1918 – начале 1919 годов», Общество. Образование, Москва, 2017, с. 27–32, և այլոց ուշագրավ հոդվածները:

2017–2018 թթ. բաժնում քննարկվել և հրատարակության են երաշխավորվել Վ. Մելիքյանի և Ե. Մարգարյանի արժեքավոր մենագրությունները: Պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Մելիքյանի հեղինակած «Պայքար Բաքվի համար (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. ապրիլ)» (Ե., 2018) աշխատությունը կարևոր է ժամանակի պատմական իրադարձությունները ճիշտ ընկալելու և հետևություններ անելու համար: Աշխատությունը և նրանում առաջ քաշված եզրահանգումները հերքում են ադրբեջանական պատմագիտության կողմից վերջին շրջանում առաջ քաշված հակագիտական և պատմության կեղծ ներկայացման մի շարք դրվագներ:

Ե. Մարգարյանի «Հելլենիզմի պատմագրության ակնարկներ Դրոյզենից մինչև XX դարավերջը» աշխատությունը կարևոր նշանակություն ունի հայ պատմագրության համար համաշխարհային պատմագիտության տեսական և մեթոդական հարցերի լուսաբանման, հետազոտական փորձի յուրացման և հարստացման տեսանկյունից:

Ընդլայնելով ինստիտուտի միջազգային համագործակցությունը և կապերը, բաժնի վարիչ Կ. Խաչատրյանը, աշխատակիցներ Վ. Մելիքյանը, Ե. Մարգարյանը, Ա. Ղամբարյանը, Ռ. Կարապետյանը, Հ. Ալեքսանյանը, Ն. Երանոսյանը, Գ. Ժամհարյանը, Ա. Մայիլյանը մասնակցել են արտասահմանում, մասնավորապես՝ Ռուսաստանում, Իսրայելում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ղրղզստանում, Եգիպտոսում, Լիբանանում՝ Անթիլիասում, և այլուր կազմակերպված տասնյակ հեղինակավոր միջազգային կոնֆերանսներին, հանդես եկել ուշագրավ զեկուցումներով և դասախոսություններով:

Բաժնի աշխատակիցները գործուն մասնակցություն են ունեցել ՀՀ պաշտպանության նախարարությանը կից հասարակական խորհրդի կողմից կազմակերպված այցելություններին Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի գորամասեր, հանդես եկել ուշագրավ դասախոսություններով: Նրանցից Կ. Խաչատրյանը, Վ. Մելիքյանը և Ա. Ղամբարյանը Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով ԱՀ ՊԲ զինժառայողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ներդրած ավանդի համար պարգևատրվեցին Արցախի Հանրապետության «Վաչագան Բարեպաշտ» և «Երախտագիտություն» մեդալներով:

Ընդհանուր պատմության բաժինը շարունակելու է գիտահետազոտական երկարաժամկետ ծրագրերի իրականացումը հետևյալ հիմնական ուղղություններով. համաշխարհային պատմագիտության մեթոդաբանության և տեսության արդի խնդիրները, Հայաստանը և հայ ժողովուրդը արտասահմանյան երկրների հետազոտողների (առաջին հերթին՝ ԱՊՀ, Վրաս-

տան, Բալթյան, Մերձավոր Արևելքի, Արաբական աշխարհի և այլն) պատմագիտական ուսումնասիրություններում, արտասահմանյան երկրների հետ Հայաստանի փոխհարաբերություններն ու առնչությունները (նորագույն և արդի ժամանակաշրջան), հայության ներդրումը արտասահմանյան երկրների մշակույթի և գիտության, տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտների զարգացման գործում, աշխարհաքաղաքական արդի փոփոխությունները Մերձավոր Արևելքում և Արաբական աշխարհում. հեռանկարներն ու հնարավոր սպառնալիքները Հայաստանի համար, Թուրքիայի ազգային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի տարածքներում 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին և այլն:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ՝ առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր Կ. Խաչատրյան, առաջատար գիտաշխատողներ՝ պ.գ.դ., պրոֆեսորներ Վ. Մելիքյան, Ե. Մարգարյան, Ռ. Կարապետյան, ավագ գիտաշխատողներ՝ պ.գ.թ., դոցենտներ Ա. Ղամբարյան, Հ. Ալեքսանյան, գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Ն. Երանոսյան, պ.գ.թ. Գ. Ժամհարյան, պ.գ.թ. Ա. Սայիյան, ավագ լաբորանտներ՝ Ջ. Թամարյան, Գ. Ղազարյան, Ա. Շագոյան, ասպիրանտ՝ Ա. Խաչատրյան: